

ՎՐԱՄԱՏԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ ԹԵՐԹ
ՐԵՏՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՊԱՐԱՊԵՏՈՒՆԵՐԻ ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ԳՆԵՊԵՏՈՒ

«Ցրահեմ» (ՆԱՅԻՐՈՅՄԵԼՈՒ)

ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ

№65 - 66 (17376) ԵՄԲԱԹ 23 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 Թ.
ԳԻՆԸ 40 ԹԵՐԹԻ

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ԿՈՐԲԱԽԻՁԵ. «ՄԵՆՔ ՉԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՄԻԱՆԱԿ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆԸ՝ ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ԽԱՂԱՊՈՒԹՅՈՒՆԸ, ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ԵՎ ԱՎԱՆՊԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ»

Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն, արձագանքելով Եվրամիությունից արձագանքների և պատգամավորների Եվրամիությանը Վրաստանի անդամակցության գործընթացի դարձրելու մասին կոչին, հայտարարեց, որ Վրաստանը ցանկանում է միանալ Եվրամիությանը՝ պահպանելով խաղաղությունը, զարգացումը ու ավանդական արժեքները:

- Երբ մենք ստիպված ենք զիջել մեր սեփական արժեքները կամ խաղաղությունն ու բարգավաճումը՝ ԵՄ անդամակցության դիմաց, եւ անուղղակիորեն ակնարկում ենք այս ամենի մասին, սա սխալ դիլեմա է: Մենք ցանկանում ենք միանալ ԵՄ-ին՝ պահպանելով խաղաղությունը, զարգացումը եւ մեր ավանդական արժեքները: Մենք ոչ մի դեպքում չենք շեղվի մեր սկզբունքներից, - լրագրողների հետ հանդիպմանը հայտարարեց Վրաստանի վարչապետը եւ հավելեց, որ Վրաստանը պատրաստ կլինի 2030 թվականին անդամակցվել Եվրամիությանը եւ (Շարունակությունը՝ 2-րդ էջում)



ՄԱՍՈՒԿԱ ՄԳԻՆԱՐԱՋԵ. «ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՑՈՒՑԱԴՐՈՒՄ Է ԵՐԿԱԿԻ ԶԱՓՈՐՈՇԻՉ»



Վրաստանի խորհրդարանի մեծամասնության ղեկավար, «Վրացական երազանք» կուսակցության գործադիր քարտուղար Մամուկա Մգինյանը՝ Եվրամիությանը մեղադրեց Վրաստանի նկատմամբ կրկնակի չափորոշիչների ցուցադրման հարցում:

Ինչպես նշեց Մամուկա Մգինյանը՝ Եվրահանձնաժողովի կողմից պատրաստված «Լավ կառավարության 2025-ը զեկույցը» հստակ ցույց է տալիս այն առաջընթացը, որին Վրաստանը հասել է «Վրացական երազանքի» կառավարության օրոք, եւ զեկույցի յուրաքանչյուր ցուցանիշի համաձայն Վրաստանը հաջողությունների է հասել բոլոր ոլորտներում:

«Այսօր մենք կցանկանայինք ուշադրություն հրավիրել հատկապես կարելու մի հարցի վրա: Ինչպես գիտեք, Եվրոպական հանձնաժողովը, (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՃԱՆԱԳՐՈՒՄ ԵՆԹԱԿՈՒՄ

ՍՈՒՐԱՄԻ ԵՐԶԱՆՅԻԿ ՃԱՆԱԳՐՈՒՄԻ ԲԱՅՈՒՄԸ՝ ՎՐԱՍՏԱՆԸ ՄԻՋԻՆ ՄԻՋԱՆՅՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՂԱԿԻ ՎԵՐԱԾԵԼՈՒ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՔԱՅԼ

ԳՈՐԾԱՐԿՎԵՑ ՌԻԿՈԹԻ ԱՌԱՋԻՆ ԹՈՒՆԵԼԻՆ ՄԻԱՅՈՂ ՍՈՒՐԱՄԻ ԵՐԶԱՆՅԻԿ ՃԱՆԱԳՐՈՒՄԸ

Օգոստոսի 16-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեի, խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլիի, երկրի կառավարության անդամների եւ խորհրդարանի պատգամավորների մասնակցությամբ, հանդիսավոր պայմաններում անցկացվեց 6.4 կմ երկարությամբ նոր, քառազուտի մայրուղու հաշտրի 13 կմ շրջանցիկ ճանապարհի շարունակությունը կազմող, Սուրամին ու Չունաթելեթին շրջանցող եւ Ռիկոթի լեռնանցքի ճանապարհի առաջին թունելին միացող ճանապարհահատվածի բացման արարողությունը:



Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն, իր խոսքում, նշեց, որ Սուրամիի շրջանցիկ ճանապարհի բացումը եւս մեկ քայլ է դեպի մեր ռազմավարական նպատակ՝ Վրաստանը դարձնել Միջին միջանցքի կենտրոնական, ամենաարագ ու անվտանգ օղակը:

- Վերջին տարիներին մենք բացեցինք Ռիկոթի ամենաբարդ հատվածները եւ Բաթումիի շրջանցիկ ճանապարհը, իսկ այսօր Սուրամիի այս հատվածի բացմամբ՝ արդեն կունենանք արագընթաց մայրուղի Թբիլիսից մինչեւ Ռիկոթի թունել: (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

ՕԳՈՍՏՈՍԻ 8-ԻՉ ՇԵՏՈՒ ՄԵՆՔ ԱՊՐՈՒՄ ԵՆՔ ԲՈՒՈՐՈՎԻՆ ՆՈՐ ԿՈՎԿԱՍՈՒՄ, ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ...

«Խաղաղությունը հաստատված է, եւ մեր խնդիրն է հոգ ու խնամք տանել նրա մասին եւ ժամանակի ընթացքում այն դարձնել ավելի ու ավելի ինստիտուցիոնալ», - ժողովրդին ուղղված ուղերձում նշել է ԳՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Ներկայացնում ենք վարչապետ Փաշինյանի ուղերձի կարեւոր շեշտադրումները:

- Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ խաղաղություն է հաստատվել: Այս գործում, իհարկե, անգնահատելի է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի ու նրա վարչակազմի դերակատարումը:



Մենք երրորդ հանրապետության քաղաքացիներ, չգիտենք, թե ինչ է խաղաղությունը, չգիտենք, թե ինչ է նշանակում ապրել խաղաղության պայմաններում, աշխատել խաղաղության պայմաններում: Դա մեզ անծանոթ զգացում է, որովհետեւ մեր անկախության առաջին օրից մենք ապրել ենք կոնֆլիկտի մթնոլորտում, պատերազմի կամ «ո՛չ պատերազմ, ո՛չ

խաղաղություն» իրավիճակում: Օգոստոսի 8-ից հետո մենք ապրում ենք բացարձակապես ուրիշ, բոլորովին նոր Հայաստանի կովկասում, մենք ապրում ենք բացարձակապես ուրիշ, բոլորովին նոր Հայաստանի Հանրապետությունում, եւ այս փաստը պետք է գիտակցել: (Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՓՈԽՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅԱՄԲ

Օգոստոսի 21-ին Երեւանում անցկացվել են Վրաստանի եւ Հայաստանի արտաքին գործերի նախարարությունների միջեւ հերթական քաղաքական խորհրդակցությունները՝ Վրաստանի արտաքին գործերի փոխնախարար Լաշա Դարսալիայի եւ Հայաստանի արտաքին գործերի փոխնախարար Վահան Կոստանյանի գլխավորությամբ:



Խորհրդակցությունների ընթացքում կողմերն ընդգծեցին երկու երկրների միջեւ ռազմավարական գործընկերային հարաբերությունների շարունակական խորացումը, կարելի էրեցին Վրաստան-Հայաստան բարձր մակարդակի փոխայցերն ու շփումները:

Անդրադարձ կատարեցին երկկողմ տնտեսական համագործակցությանը, զբոսաշրջության, տրանսպորտի, էներգետիկայի, առևտրի եւ ներդրումների ոլորտներին առնչվող հարցերի լայն շրջանակի, մշակութային, կրթական կապերի ամրապնդմանը, միջազգային կազմակերպություններում համագործակցությանը, իրավապայմանագրային դաշտի ընդլայնմանը:

Կողմերը քննարկեցին նաեւ տարածաշրջանային խաղաղությանն ու համագործակցությանն առնչվող հարցեր, որոնց համատեքստում Վահան Կոստանյանն իր վրաց գործընկերոջը տեղեկացրեց օգոստոսի 8-ին Վաշինգտոնում Հայաստանի, Ամերիկայի Միացյալ Նահանգների եւ Ադրբեջանի ղեկավարների հանդիպման արդյունքների մասին:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ԿՈՐԱԽԻԶԵ. «ՄԵՆՔ ՅԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՄԻԱՆԱԼ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆԸ՝ ԴԱՅՊԱՆԵԼՈՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ, ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ԵՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կարելի է այն է, որ մինչ այդ Եվրամիության մեջ նույնպես գործընթացները այլ ուղղությամբ զարգանան:

- Չեզ հայտնի է, թե որն է մեր արտաքին քաղաքական առաջնահերթությունը: Առաջինը Եվրամիությանն ինտեգրումն է: Դա մեր որդեգրած նպատակն է, եւ մենք նաեւ հայտարարել ենք, որ 2028 թվականի համար կկատարենք Ասոցացման համաձայնագրից բխող պարտավորությունների ավելի քան 90 տոկոսը: Մենք պատրաստ կլինենք ամբողջությամբ միանալ Եվրամիությանը մինչեւ 2030 թվականը: Կարելի է այն է, որ մինչ այդ Եվրամիությունում գործընթացներն այլ ուղղությամբ ընթանան: Այսօր ժողովրդավարության,

մարդու իրավունքների եւ տնտեսության ոլորտներում միտումները մտահոգիչ են: Ցավոք, բոլոր ուղղություններով նկատվում է հետընթաց: Հուսով ենք, որ մինչ մենք 2030 թվականին պատրաստ կլինենք Եվրամիությանը միանալու, Եվրամիությունում արդեն փոխված կլինեն միտումները եւ ԵՄ-ում ժողովրդավարական համակարգը կբարելավվի: Մարդու իրավունքները ավելի լավ կպաշտպանվեն, եւ տնտեսությունն է՛լ ավելի կուժեղանա,- նշեց Իրակլի Կոբախիձեն:

Վարչապետի հավաստմամբ, Վրաստանը մեկ անգամ եւս հաստատում է Եվրոպական բյուրոկրատիային երկրի պատրաստակամությունը՝ առողջ քննարկում անցկացնել բոլոր այն թեմաների շուրջ, որոնցից նրանք մինչ այժմ խուսափում էին,

քանի որ ճշմարտությունը նրանց կողմը չէ: - Եվրոպական բյուրոկրատիային մենք կրկին հաստատում ենք մեր պատրաստակամությունը՝ վարելու առողջ քննարկում բոլոր թեմաների շուրջ: Մենք որեւէ հարց չենք փակում, բայց ցանկանում ենք առողջ քննարկում բոլոր թեմաների վերաբերյալ: Տեսնում եք, որ մինչ օրս Եվրոպական բյուրոկրատիան խուսափում է նման առողջ քննարկումներից, քանի որ ճշմարտությունը նրանց կողմում չէ, ճշմարտությունը մեր կողմում է: Մենք ընդունել ենք լիովին առողջ օրենքներ, ձեռնարկել ենք բացարձակապես ճիշտ քայլեր, մենք վճռականորեն պաշտպանում ենք օրենքի գերակայությունը եւ ժողովրդավարությունը մեր երկրում,- ընդգծեց Իրակլի Կոբախիձեն:

ՄԱՍՈՒԿԱ ՄԴԻՆԱՐԱՁԵ. «ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍԱՆԻ ՆԿԱՏԱԱՄԲ ՑՈՒՑԱԴՐՈՒՄ Ե ԵՐԿԱԿԻ ԶԱՓՈՐՈՇԻՉ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

որի նախագահը տիկին Ուրսուլա Ֆոն Լեյթնեյն է, ով այժմ է ընկնում Վրաստանի նկատմամբ իր սուր ու անարդար քննադատությամբ, «Լավ կառավարություն 2025» գեկոյցի շրջանակներում հրապարակել է մի քանի կարեւոր ինդեքսներ: Եվրոպական հանձնաժողովի կողմից հրապարակված գեկոյցը պատրաստվել է «Չանդիների կառավարման ինստիտուտի» կողմից եւ հիմնված է ՄԱԿ-ի, Համաշխարհային բանկի, Արժույթի հիմնադրամի, Համաշխարհային տնտեսական ֆորումի, այլ միջազգային ճանաչված կառույցների եւ գլոբալ գնահատման կազմակերպությունների պրոֆիլային ուսումնասիրությունների ու տվյալների վրա, այսինքն՝ օբյեկտիվ չափանիշների եւ փաստացի տվյալների: Հարկ է ընդգծել, որ, այս յուրաքանչյուր ինդեքսի համաձայն, Վրաստանը հաջողությունների է հասել բացարձակապես բոլոր ոլորտներում, եւ ավելին, որոշ ոլորտներում մենք գրանցել ենք պատմական նշանակության առաջընթաց,- հայտարարեց Մամուկա Մդինարաձեն եւ հավելեց, որ «Ուժեղ ինստիտուտների ինդեքսի» համաձայն՝ Վրաստանի կառավարությունը, 100 տոկոսանոց գնահատման համակարգով, գրանցել է նոր պատմական առավելագույն՝ 63 տոկոս եւ զբաղեցրել է 34-րդ տեղը աշխարհում, գերազանցելով ԵՄ անդամակցության բոլոր թեկնածու երկրներին, ԵՄ եւ ՆԱՏՕ-ի 13 անդամ պետություններին:

«Գրավիչ շուկայական տնտեսության» ինդեքսում Վրաստանը 63,2 տոկոսով սահմանել է նոր պատմական բարձրակետ՝ այն զբաղեցրել է 30-րդ տեղը աշխարհում եւ ընդգրկվել է Եվրոպայի լավագույն 20 երկրների շարքում: «Առաջնորդություն եւ հեռատեսություն» ինդեքսում Վրաստանի կառավարությունը Եվրոպայի լավագույն 20 երկրների շարքում է: 100 տոկոս վարկանիշային համակարգով այն ստացել է 52 տոկոս, զբաղեցնելով աշխարհում 32-րդ տեղը եւ Եվրոպայի լավագույն 20 երկրների շարքում: 17-րդ տեղը: «Հուսալի օրենսդրության եւ քաղաքականության» ինդեքսի համաձայն՝ Վրաստանի կառավարությունը Եվրոպայի լավագույն 20 երկրների շարքում է: Վրաստանի կառավարությունը՝ 100 տոկոս վարկանիշային համակարգով, ստացել է 70 տոկոս՝ զբաղեցնելով աշխարհում 26-րդ տեղը եւ Եվրոպայի լավագույն 20 երկրների շարքում՝ 18-րդ տեղը:

- Իհարկե, բոլորը հասկանում են, որ սա շատ մեծ հաջողություն է. հաջողություն, որը պատկանում է ոչ միայն «Վրացական երազանքի» կառավարությանը, այլեւ Վրաստանին եւ ամբողջ վրաց ժողովրդին: Այս հաջողությունն ավելի կարեւոր ու գովելի է, հաշվի առնելով, որ մեր քաղաքական թիմը եւ երկիրը այս հաջողությանը հասան Եվրոպական բյուրոկրատիայի անհեթեթ մեղադրանքների եւ ճգնաժամի պայմաններում, եւ դուք լավ հիշում եք, մեղմ ասած, ներքին խառնաշփոթը, հայտարարեց Մամուկա Մդինարաձեն:

ՆՈՐ ՆԵԱՆԱԿՈՒՄ

ԷԿԱՏԵՐԻՆԵ ԽՈՒՅԻՇՎԻԼԻՆ ՆԵԱՆԱԿՎԵԼ Ե «ՈՒՍՈՒՅԻՉՆԵՐԻ ՏԱՆ» ՏԵՕՐԵՆ

Վրաստանի կրթության, գիտության եւ երիտասարդության նախարարության ենթակայության ներքո գործող Հանրային իրավունքի իրավաբանական անձ (ՀԻԻԱ) «Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնի» տնօրենն է նշանակվել Էկատերինե Խուցիշվիլին:

Վրաստանի կրթության, գիտության եւ երիտասարդության նախարար Գիվի Միքանաձեն Կենտրոնի նորանշանակ ղեկավար Էկատերինե Խուցիշվիլին ներկայացրեց աշխատակիցներին:

Նշյալ Կենտրոնի առաքելությունն է աջակցել ուսուցիչների մասնագիտական շարունակական զարգացմանն ու նպաստել ընդհանուր կրթության բարեփոխումների իրականացմանը: Էկատերինե Խուցիշվիլին կրթության համակարգում աշխատանքի երկարամյա փորձ ունի: Եղել է դպրոցի տնօրեն, մայրաքաղաքի Հին Թբիլիսիի շրջանի ռեսուրսկենտրոնի պետ, իսկ 2017 թվականից՝ Վրաստանի կրթության, գիտության եւ երիտասարդության նախարարության Նախադպրոցական եւ ընդհանուր կրթության ղեկավարամեթոդի Տարածաշրջանային կառավարման բաժնի վարիչն էր:

«Վրաստան» թերթը շնորհավորում է Էկատերինե Խուցիշվիլին՝ «Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնի» տնօրենի պաշտոնում նշանակվելու կապակցությամբ, ցանկանում աշխատանքային ձեռքբերումներ ու հաջողություններ:



ՆԱԽԱՁԵՂՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏԱՐԱՐՎԵԼ Ե ԴԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՌԱՄՍՅԱ ՎՃԱՐՈՎԻ ԴՐԱԿՏԻԿԱՅԻ ՄՐՅՈՒՅՐ

Վրաստանի վարչապետի որոշմամբ՝ 2025 թվականի սեպտեմբերի 1-ից պետական հաստատություններում, ինչպես նաեւ պետական համակարգի մեջ մտնող պետական եւ մասնավոր իրավաբանական անձանց մոտ հայտարարվում է եռամսյա վարձատրվող պրակտիկայի մրցույթ:

Պրակտիկա անցնելու ցանկություն ունեցողները կարող են հայտ ներկայացնել 2025 թվականի սեպտեմբերի 1-ից մինչեւ 10-ը ներառյալ՝ կառավարական վարչության կողմից կառավարվող www.hr.gov.ge կայքի միջոցով՝ դիմելով տարբեր գերատեսչությունների կողմից հայտարարված մոտ 3,000 մրցույթներից մեկին:

Պրակտիկանտ կարող է դառնալ Վրաստանի իրավունակ քաղաքացի, ով տիրապետում է պետական լեզվին, սովորում է բարձրագույն կրթության առաջին աստիճանում (ավարտական ուսումնական տարվա դեպքում), կամ երկրորդ աստիճանում, կամ ավարտել է բարձրագույն կրթության առաջին կամ երկրորդ աստիճանը

2024-2025 ուսումնական տարվա զարմանային կիսամյակում:

Ընտրության չափանիշ է սահմանվել թեկնածուի ակադեմիական առաջադիմությունը (մեկնարկային գնահատման համակարգ՝ 71-100 միավոր կամ/եւ GPA՝ 2.7-4.0): Բացի այդ, գերատեսչություններն իրենց կառուցվածքային բաժիններին համապատասխան եւ ըստ ոլորտի առանձնահատկությունների՝ կարող են սահմանել լրացուցիչ որակավորման պահանջներ:

Մրցույթը կանցկացվի երկու փուլով՝ հայտերի ընտրություն եւ հարցազրույց: Պրակտիկայի դիմած անձանց գնահատելու է համապատասխան պետական հաստա-

տության ղեկավարի կողմից ստեղծված հանձնաժողովը: Համարժեք թեկնածուների դեպքում հարցազրույցի ժամանակ առավելությունը կտրվի նրանց, ովքեր ունեն ավելի բարձր ակադեմիական առաջադիմություն:

Ընտրված թեկնածուները պրակտիկան կանցնեն 2025 թվականի հոկտեմբերի 1-ից մինչեւ դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Այն պետական հաստատություններում, որտեղ աշխատանքը համարվում է պետական ծառայություն, պրակտիկան կհաշվարկվի՝ որպես պետական ծառայության ստաժ, իսկ պետական հաստատության կազմում գործող պետական կամ/եւ մասնավոր իրավաբանական անձանց մոտ պրակտիկան՝ որպես ընդհանուր ստաժ/աշխատանքային փորձ:

Լրացուցիչ հարցերի դեպքում՝ հնարավոր է նաեւ դիմել էլ. հասցեով՝ userhr@gov.ge:

ԱՄՆ - ՌՈՒՍԱՍԱՆ

ՀԱՎԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆ նահանգ Ալյասկայում օգոստոսի 15-ին ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի եւ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հանդիպման արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունները, կողմերի գնահատմամբ՝ նշանակալի քայլ է ուկրաինական հակամարտության կարգավորման ուղղությամբ:

«Ալյասկայում երկկողմ բանակցությունները շատ արդյունավետ էին, եւ երկու երկրների առաջնորդները համաձայնության եկան մի շարք կարեւոր կետերի շուրջ, ինչը բացեց ճանապարհ բանակցությունների երկրորդ փուլի համար», - ասված է Սպիտակ տան հաղորդագրության մեջ:

Հանդիպման հաջորդ օրը, ԱՄՆ նախագահը Սպիտակ տանը հանդիպում ունեցավ Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի, Գերմանիայի կանցլեր Ֆրիդրիխ Սեցի, Իտալիայի վարչապետ Ջովանի Մելոնիի, Եվրահանձնաժողովի նախագահ Ուրսուլա Ֆոն Լեյթնեյնի հետ, ապա առանձնազրույց ունեցավ Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Չեռնոսկու հետ:

Հանդիպումների արդյունքներով, Դոնալդ Թրամփը հայտարարեց, որ ԱՄՆ-ն ձեռնամուխ է լինում մոտ ժամանակներում Ռուսաստանի եւ Ուկրաինայի նախագահների հանդիպման կազմակերպմանը:

ԻՍՐԱՅԵԼ - ՀԱՄԱՍ ԿԻՐԱԿԱՆԱՑՎԻ ՀՐԵԱ ԴԱՏԱՆԴՆԵՐԻ ԵՎ ԲԱՆՏԱՐԿԱԾ ՊԱՂԵՍԻՆՑԻՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

Պաղեստինյան ՀԱՄԱՍ շարժումը միջազգային միջնորդներին հայտնել է, որ հավանություն է տվել Գազայի հատվածում հրադարձի նոր առաջարկին:

ՀԱՄԱՍ-ը նաեւ համաձայնել է ազատ արձակել Գազայի հատվածում պահվող հարյուրից պատանդների կեսին՝ մի շարք պաղեստինցի բանտարկյալների փոխարեն, նշելով, որ փոխանակումը տեղի կունենա 60-օրյա հրադարձի շրջանակում:

ՀԱՄԱՍ-ի կողմից ներկայացված առաջարկը շրջանակային համաձայնագիր է՝ երկարաժամկետ հրադարձի շուրջ բանակցություններ սկսելու համար: Նախագիծը ներառում է նաեւ Միացյալ Նահանգների կողմից նախկինում առաջարկված կետեր, այդ թվում՝ 60-օրյա հրադարձի եւ պատանդների երկփուլ ազատ արձակում:

ԳԱԶԱՅՈՒՄ ԶՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ ԳԵՐԱՁԱՆՑԵՑ 62 ՀԱԶԱՐԸ

Գազայի հատվածում պատերազմի զոհերի թիվը գերազանցել է 62 000-ը, վիրավորների թիվը հասել է զրեթե 156 600-ի: Պաղեստինի առողջապահության նախարարության տվյալներով, սովից եւ թերսնուցումից զոհերի թիվը կազմել է 266, որոնցից 112-ը երեխաներ են: Գազայի հատվածում պատերազմի սկզբից ի վեր զոհված լրագրողների թիվը հասել է 239-ի:

ԱՐԿԵՍ

«ԿԱՐԱՄՔԱՆ» ՆՈՐ ՆԱԽԱԳԾԵՐՈՎ ԿՈՒՐԱԽԱՑՆԻ ԹԲԻԼԻՍՑԻՆԵՐԻՆ

Թբիլիսիի Պուշկինի փողոցի համար 6 տանը անսովոր եռուզեռ էր: Բոլոր կողմերից լսվում էին «Կարամքա, կարամքա» («Մի՛ վախեցե՛ք», դա ծովահենների սիրված արտահայտությունն էր) բացականչությունները: Ընտանիքում են ձեռք վստահեցնել, որ այս հասցեում բացված նոր արվեստի պատկերասրահի անունն է այն: Պատկերասրահը հիմնադրել է մեր հայրենակից Արամ Բաբլոյանը, ով աշխարհով մեկ երեսունամյա դեգերումներից հետո վերադարձել է իր հայրենի քաղաք:



Առաջին իսկ ցուցահանդեսը մեծ հետաքրքրություն առաջացրեց պատկերասրահի բազմաթիվ այցելուների շրջանում: Մանավանդ, որ այնտեղ ներկայացված էին Սերգեյ Փարաջանովի կողմից նու լուսանկարները, որոնք անհայտ էին թբիլիսցիներին: Արամ Բաբլոյանը փորձառու հավաքող է, հին թբիլիսիի ու թբիլիսցի նկարիչների հետ կապված բազմաթիվ բազմազան հավաքածուների սեփականատեր: Վերջին 15 տարիների ընթացքում նա աշխատել է Սերգեյ Փարաջանովի աշխատանքների շուրջ՝ իր հավաքածուի ցուցանմունքները ներկայացնելով տարբեր երկրներում, ինչպես նաև Մոսկվա, Երևան, Նիժնի Նովոգորոդ եւ այլ քաղաքներում: Արամ Բաբլոյանի հավաքածուն պարունակում է Սերգեյ Փարաջանովի մոտ 3000 լուսանկար, որոնք արվել են 12 երկրների 26 հեղինակների կողմից, հետևաբար, առջեւում մշակութասեր հասարակայնությանը մեկից ավելի ցուցահանդես է սպասվում:

վում: Ասեմք նաև, որ հավաքողը չի պատրաստվում զարմացնել թբիլիսցիներին միայն Փարաջանովով: Հավաքածուն պարունակում է եւ այլ հեղինակների բազմաթիվ աշխատանքներ. Լեւ Բոյախչեւ, Գայանե Խաչատուրյան, թբիլիսահայ այլ նկարիչներ... Նշենք նաև, որ հավաքածուում հատուկ տեղ են զբաղեցնում թբիլիսցի ակադեմիկոս լուսանկարիչ Ալեքսանդր Սաակովի աշխատանքները, որի հետ նա երկարամյա բարեկամություն է արել: Հուսով ենք, որ «Կարամքա» պատկերասրահը թբիլիսցիներին կուրախացնի նոր, հետաքրքիր նախագծերով եւս: Իսկ ծովահենները, այնուամենայնիվ, ներկա էին պատկերասրահի բացմանը: Ս.Պ.-ն ինքը՝ ծովահենի կերպարանքով պատուհանին նստած, հետաքրքրությամբ նայում էր այս ամբողջ «տիպանոթյանը»: Հաջողություններ մաղթենք նոր արվեստի տարածքին...

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՂՈՐԴՈՒՄ Ե ՎՐԱՑԱԿԱՆ ՈՒՐԻՈ «ՄԱԵՍՏՐՈՆ»

«ԹԲԻԼԻՍԻՆ՝ ԿՈՎԿԱՍԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ»



Անկախ «Մաստրո» ռադիոն, որը հեռարձակվում է 94,7 ալիքով ու լսում են Վրաստանի բոլոր տարածաշրջաններում, օգոստոսի 20-ի եթերում հնչեց «Թբիլիսին՝ Կովկասի մայրաքաղաք» լրատվությունը: Այն նվիրված էր թբիլիսիին ու նրա բազմազգ բնակչության քանակին: Հաղորդման մեջ ասվում է.

- Թբիլիսին բոլոր ժամանակներում եղել է Կովկասի քաղաքական, տնտեսական ու մշակութային կենտրոնը: Այստեղ միշտ ապրել են այլազգիներ, ինչը վրացիների ավանդական հանդուրժողականության արդյունքն է: 19-րդ դարի վերջին Թբիլիսիում ռուսների թիվը գերազանցեց 50 հազարը: Աճեց նաև հայերի թիվը, եւ կար նաև մուսուլմանների որոշակի քանակ: 1902 թվականին Թբիլիսին ուներ 190 հազար բնակիչ: Այդ թվում

էին. 19%-ը՝ վրացիներ, 20%-ը՝ ռուսներ, 29%-ը՝ հայեր եւ 25%-ը՝ այլազգիներ: Չնայած նման բազմազգությանը՝ Թբիլիսին միշտ պահպանել է իր վրացական կոլորիտն ու յուրահատկությունը, որում համադրվել են վրացական ազգային, եվրոպական, արեւելյան աշխարհները: Հենց այս սինթեզն ու յուրօրինակ կոլորիտն է գրավել ու գրավում օտարերկրացու ուշադրությունը:


ՐԻՇԱՍԱԿ

ՄԱՀԱՅԵԼ Ե ԶԱՆՍՈՒՂ ԶԱՐԿՎԱՆԻ ՈՐՈՒՆ՝ ՄԱՍՈՒԿԱՆ

69 տարեկան հասակում մահացել է վրաց գրականության դասական, հայ ժողովրդի մեծ բարեկամ Ջանսուղ Չարկվիանի որդին, վրացի երաժիշտ, երգահան Մամուկա Չարկվիանին: Մամուկա Չարկվիանին ավարտել է Թբիլիսիի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, աշխատել է որպես Մետեխի թատրոնի գեղարվեստական ղեկավար, եղել է Գ.Լեոնիձեի անվան գրականության թանգարանի փոխտնօրենը: 1992 թվականին աշխատել է որպես նախագահի աշխատակազմի խորհրդատու-խորհրդակից:



1995 թվականից ակտիվ հանդես է եկել վրացական էստրադայում: Կատարել է հեղինակային երգեր՝ հիմնականում հոր Ջանսուղ Չարկվիանի բանաստեղծությունների հիման վրա: Թողարկել է ալբոմներ: Ստացել է երգի փառատոնի՝ «Լիզա»-ի առաջին մրցանակը՝ «Վրացական ավանդական երգ» անվանակարգում «Կանաչ ճյուղեր» երգի համար (1996), 20-րդ դարի լավագույն երգի մրցանակը՝ «Բարձր ու բարձր» երգի համար (1999), «Ոսկե սկավառակ»՝ «Տարվա լավագույն երգ» անվանակարգում երգերի համար՝ «Դու այլևս ինձ չես», «Գարուն», «Ապրիլ» եւ «Մոր հերթը»: 2014 թվականի մայիսի 10-ին Թբիլիսիի ֆիլհարմոնիայի մեծ համերգասրահի դիմաց բացվել է Մամուկա Չարկվիանի աստղը: «Վրաստան» թերթի խմբագրությունը իր վշտակցությունն է հայտնում հայ ժողովրդի մեծ բարեկամ, բանաստեղծ Ջանսուղ Չարկվիանի որդու՝ Մամուկա Չարկվիանի մահվան կապակցությամբ եւ ցավակցում է հանգուցյալի հարազատներին ու մերձավորներին:



ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԿԱՅԱՑԱԿ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՐՏԱԳՆԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության ներկայացուցիչները անցկացրին արտագնա հանդիպում՝ քննարկելու հարկային եւ մաքսային վարչարարության գործընթացում առկա խնդիրները:



Աշխատանքային հանդիպման շրջանակում, ծառայության ղեկավար Իրակլի (Դաչի) Բերախան, գործակալության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների հետ, քննարկեց եկամուտների ծառայության 2025-2030 թվականների ռազմավարությունը, դրա իրականացման ընթացքն ու ռազմավարության հիմնական կատարողականի ցուցանիշները (KPI): Հանդիպմանը հատուկ ուշադրություն դարձվեց գործակալությունում իրականացվող եւ նախատեսվող նախագծերին, ինչպես նաև գնահատվեցին եկամուտների ծառայությունում նախագծերի կառավարման եւ կատարողականի մշտադիտարկման համակարգի կատարելագործման պարամետրերը: Ծառայության ղեկավարն ընդգծեց ծառայության բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների ակտիվ ներգրավվածության եւ նախաձեռնությունների կարևորությունը ռազմավարական նպատակներին հաջողությամբ հասնելու համար:

Իրակլի Բերախան նշեց, որ այս ձեռնարկով հանդիպումները կշարունակվեն ապագայում եւս: Աշխատանքային խմբի նիստին մասնակցեցին եկամուտների ծառայության պետի տեղակալներ Պատա Կիլաձեն եւ Իրակլի Շարտավան, ինչպես նաև տարբեր գերատեսչությունների ղեկավարներ:

«ՔՈՒԹԱՅԻՍԻ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆ» ՄԱՔՍԱՅԻՆ ԱՆՃԱԿԵՏՈՒՄ ԿԱՆԽՎԵԼ Է ՄԵԾ ԲԱՆԱԿՈՒԹՅԱՔ ԶԱՅՏԱԳՐՎԱԾ ՈՍԿԵ ԵՎ ԱՐԾԱԹԵ ԶԱՐԳԵՂԵՆԻ ՆԵՐԿՐՈՒՄԸ

Ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության «Քութայիսի օդանավակայան» մաքսային անցակետում հայտնաբերվել է հինգ խախտում:



Մասնավորապես, կասկածի հիման վրա, մաքսային ծառայողները, Վրաստանի եւ օտարերկրյա քաղաքացիների ֆիզիկական եւ անձնական իրերի մանրամասն զննման արդյունքում, հայտնաբերել են չհայտագրված ոսկե (ընդհանուր քաշը՝ 440.95 գրամ) եւ արծաթե (քաշը՝ 70.19 գրամ) զարդեր: Չհայտագրված ապրանքների ընդհանուր մաքսային արժեքը կազմել է 82,841.39 լարի: Երկու օրինախախտի գործի նյութերը փոխանցվել են Վրաստանի ֆինանսների նախարարության բաժնի:

տանի ֆինանսների նախարարության քննչական ծառայությանը՝ հետագա արձագանքման համար, եւ երեք խախտողներ տուգանվել են ընդհանուր առմամբ 27,990.91 լարիի չափով՝ համաձայն Մաքսային օրենսգրքի 168-րդ հոդվածի առաջին մասի:

«ՍԱՐՓԻ» ՄԱՔՍԱՅԻՆ ԱՆՃԱԿԵՏՈՒՄ ԿԱՆԽՎԵԼ ԵՆ ԶԱՅՏԱԳՐՎԱԾ 5516 ԳԵՂԱՂԱՔԻ ԵՎ 807 ԳԵՂԱՊԱՏԻՃ ՀՈԳԵՄԵՏ ՆՅՈՒԹԵՐԻ ՉԱՐՏԱՆԻ ՆԵՐԿՐՄԱՆ ՓԱՍՏԵՐ

«Սարփի» մաքսային անցակետում կանխվել է մեծ քանակությամբ չհայտագրված բժշկական պատրաստուկներ ու հոգեմետ նյութեր պարունակող դեղամիջոցների գաղտնի ներմուծման երկու դեպք:

Ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային ծառայողները, կասկածի հիման վրա, ստուգել են օտարերկրյա քաղաքացիների ձեռքի ուղեբեռն ու տրանսպորտային միջոցները, եւ հայտնաբերել 807

դեղապատիճ հոգեմետ նյութեր եւ 5516 հաք չհայտագրված բժշկական դեղամիջոցներ: Չհայտագրված ապրանքների ընդհանուր մաքսային արժեքը կազմում է 7,856 լարի: Խախտող քաղաքացուն, որպես պատժա-

միջոց, տուգանվել են չհայտագրված ապրանքների արժեքի 100%-ի չափով, համաձայն Վրաստանի մաքսային օրենսգրքի 168-րդ հոդվածի առաջին մասի: Գործի նյութերը (հոգեմետ դեղամիջոցների վերաբերյալ) փոխանցվել են Վրաստանի ներքին գործերի նախարարության համապատասխան վարչություն՝ հետագա արձագանքման համար: Ֆինանսների նախարարության եկամուտների ծառայություն



ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ՝ ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ՝ ԿԱՊՎԱԾ ԿՈՒՍԱԿՅԱԿԱՆ ԶՈՒՅԱԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԹԱՐՄԱՅՎԱԾ ԿԱՐԳԻ ՀԵՏ



Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովը, հոկտեմբերի 4-ին անցկացվելիք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կապակցությամբ, հանդես եկավ ընտրություններին մասնակցող կուսակցությունների կուսակցական ցուցակների ներկայացման կանոնների և դրանց հետ կապված նորամուծության պարզաբանմամբ:

Ընտրական վարչությունը բացատրում է, որ, ընտրական օրենսդրության համաձայն, մուկիցիպալ ընտրություններին գրանցված կուսակցությունն իրավունք ունի ներկայացնել մեկ կուսակցական ցուցակ յուրաքանչյուր սակրեբուլոյի համար: Կուսակցական ցուցակում սակրեբուլոյի անդամության թեկնածուների թիվը չպետք է լինի 6-ից պակաս եւ 45-ից ավելի, իսկ թիվի սակրեբուլոյի համար՝ 50-ից պակաս եւ 100-ից ավելի: Գրանցված կուսակցությունը պետք է իր կուսակցական ցուցակը ներկայացնի համապատասխան շրջանային ընտրական հանձնաժողովի նախագահին եւ թիվի սակրեբուլոյի խորհրդի կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին ընտրությունների օրվանից (սեպտեմբերի 4) ոչ ուշ, քան 30-րդ օրը:

Ընտրական օրենսդրության համաձայն՝ նույն անձին տարբեր կուսակցական ցուցակներում ներառելն անթույլատրելի է:

Ընտրություններին մասնակցող կուսակցությունը, կուսակցական ցուցակ ներկայացնելիս, պետք է կցի սակրեբուլոյի անդամի յուրաքանչյուր թեկնածուի կողմից լրացված եւ ստորագրված կուսակցական պատկանելության դիմումը:

Կուսակցական պատկանելության դիմումում, թեկնածուի անձնական տվյալների (անուն, ազգանուն, Վրաստանի քաղաքացու անձնական համարը) եւ դիմումի լրացման ամսաթվի հետ միասին, պետք է նշվի, որ նա այն կուսակցության անդամն է, որի կողմից առաջադրվել է, կամ անկուսակցական է, կամ, եթե լքել է կուսակցությունը կուսակցական ցուցակի/թեկնածուի գրանցման դիմումը ներկայացնելուց առաջ վերջին 6 ամսվա ընթացքում, պարտավոր է նշել կուսակցությունից դուրս գալու ճշգրիտ ամսաթիվը եւ այդ կուսակցության անվանումը: Եթե թեկնածուն «Քաղաքացիների քաղաքական միությունների մասին» Վրաստանի օրգանական օրենքի համաձայն գրանցված մեկ այլ կուսակցության անդամ է, դիմումում պետք է նշվի կուսակցության անվանումը:

Սակրեբուլոյի անդամի թեկնածուն չի գրանցվի ընտրությունների համար, եւ գրանցված

թեկնածուի ընտրական գրանցումը կչեղարկվի համապատասխան շրջանային ընտրական հանձնաժողովի/ԿԸՀ նախագահի հրամանագրով, եթե պարզվի, որ թեկնածուն այլ կուսակցության անդամ է, որը գրանցված է համաձայն՝ «Քաղաքացիների քաղաքական միությունների մասին» Վրաստանի օրգանական օրենքի կամ խախտվել են վերոնշյալ որոշման մեջ նշված պահանջները:

Վերոնշյալից բացի, կուսակցական ցուցակին պետք է կցվի սակրեբուլոյի անդամության յուրաքանչյուր թեկնածուի կողմից լրացված եւ ստորագրված գրանցման քարտը՝ կրկնօրինակով, Վրաստանի քաղաքացու անձը հաստատող փաստաթղթի կամ անձնագրի պատճեն եւ երկու լուսանկար:

Կուսակցական ցուցակում պետք է նշված լինեն թեկնածուի՝ ազգանունը, անունը, ծննդյան ամսաթիվը (օր, ամիս, տարի), սեռը, հասցեն (ըստ Վրաստանի քաղաքացու անձը հաստատող փաստաթղթի կամ գործակալության տվյալների բազայի), Վրաստանի քաղաքացու անձնական համարը, աշխատանքի վայրը (եթե գործազուրկ է, նշվում է «գործազուրկ»), պաշտոնը (գործունեությունը), տեղական մեծամասնական ընտրատարածքում առաջադրվելու դեպքում՝ այդ շրջանի անվանումը եւ համարը:

Գրանցման քարտում պետք է նշված լինեն յուրաքանչյուր թեկնածուի հետեւյալ տեղեկությունները. ազգանուն, անուն, ծննդյան ամսաթիվը (օր, ամիս, տարի), սեռը, հասցեն (ըստ Վրաստանի քաղաքացու անձնագրի կամ գործակալության տվյալների բազայի), Վրաստանի քաղաքացու անձնական համարը, աշխատանքի վայրը (եթե գործազուրկ է, նշվում է «գործազուրկ»), պաշտոնը (գործունեությունը), Վրաստանում 6 ամիս բնակվելու փաստը, տվյալ կուսակցության ցուցակով քվեարկելու համաձայնությունը, տեղական մեծամասնական ընտրատարածքում քվեարկելու համաձայնությունը (եթե ներկայացվել է), գրանցման քարտը լրացնելու ամսաթիվը:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

ՃԱՆԱԳՐՈՒՄՅԻՆ ԵՆԹԱԿՈՒՄՅՑ

ՍՈՒՐԱՄԻ ԸՐԶԱՆՅԻԿ ՃԱՆԱԳՐՉԻ ԲԱՅՈՒՄԸ՝ ՎՐԱՍԱՆԸ ՄԻՋԻՆ ՄԻԶԱՆՅԻԿ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՂԱԿԻ ՎԵՐԱԾԵԼՈՒ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԲԱՅՅԼ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Մեր քաղաքացիների եւ հյուրերի համար սա նշանակում է ճանապարհի անցնելու ժամանակի կրճատում, անվտանգության բարձրացում եւ, ամենակարեւորը, Սուրամի եւ հարակից բնակավայրերի ապաբեռնավորում տարանցիկ երթուղիների միջոցով: Այս նախագիծը շատ ավելի է, քան պարզապես ենթակառուց: Սա եւս մեկ քայլ է մեր ռազմավարական նպատակի ուղղությամբ՝ Վրաստանը դարձնել Եվրոպայի եւ Ասիայի կապող Միջին միջանցքի կենտրոնական, ամենաարագ ու անվտանգ օղակը: Դա նշանակում է նվազեցված լոգիստիկ ծախսեր, ավելացված բեռնաշրջանառություն, նոր աշխատատեղեր եւ աճող ներդրումներ մեր երկրի համար: Նախագծի օգուտները անմիջապես կարտացոլվեն մեր քաղաքացիների բարեկեցության վրա, կուժեղացնեն մեր երկրի տնտեսական, տարածաշրջանային եւ աշխարհաքաղաքական դիրքերը: Այս հեռանկարը լավագույնս երեւում է թվերում, արդեն արձանագրված արդյունքներն ու դրանց տարածքը ցույց են տալիս, մեր կառավարության օրոք կառուցված ավելի քան 298 կիլոմետր մայրուղի: Հիշեցնենք, որ մինչեւ 2012 թվականն ընդամենը 68 կիլոմետր ավտոմայրուղի էր կառուցված, հայտարարեց վարչապետը՝ հավելելով, որ փուլաբար կավարտվեն բոլոր ընթացիկ նախագծերը եւ կսկսվի Բաթումի-Սարպի, Կարմիր կամուրջի եւ Սադախլոյի հատվածների շինարարությունը:



Նշենք, որ Սուրամի շրջանցիկ ճանապարհը արել է քարեկաշվով արագընթաց ավտոմայրուղու կարեւոր մասն է, եւ դրա շինարարության նախագիծն իրականացրել է ենթակառուցվածքների նախարարության ավտոճանապարհների դեպարտամենտը:

Գերատեսչության տեղեկատվությամբ, նոր, 6,4 կմ երկարությամբ քառուղի մայրուղու հատվածում կառուցվել է 11 կամուրջ եւ 5 թունել: Այս հատվածը խաշուրի շրջանցիկ 13 կմ ճանապարհի շարունակությունն է, շրջանցում է Սուրամին ու Չունաթելեթին եւ միանում է Ռիկոթի լեռնանցքի առաջին թունելին: Ճանապարհը կառուցված է միջազգային ճանապարհային անվտանգության ստանդարտներին համապատասխան, եւ հազեցած է ժամանակակից լուսավորության համակարգով: Նախագիծը էապես կկրճատի ճանապարհին անցկացվող ժամանակը, կբարելավի երթուղիության անվտանգությունը եւ ամբողջությամբ կազատի Սուրամին տարանցիկ տրանսպորտային հոսքից:

Սուրամիի շրջանցիկ ճանապարհի բացումից հետո ավտոտրանսպորտը կկարողանա օգտվել Թբիլիսիից մինչեւ Սամտրեդիա ձգվող 230 կմ անընդհատ արագընթաց ճանապարհից:

Շինարարական աշխատանքներն իրականացվել են Համաշխարհային բանկի վարկով եւ պետական բյուջեի համաֆինանսավորմամբ: Նախագծի ընդհանուր արժեքը կազմել է 265 միլիոն լարի:

ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅՈՒՆ

«ԱՐՏԱԳՐԻՐ ՎՐԱՍԱՆՈՒՄ» ԾՐԱԳԻՐՆ ԸՆԴԱՅՆՈՒՄ Ե ԶՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վրաստանի Էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարության «Արտադրի՞ր Վրաստանում» գործակալությունը փոփոխություններ է մտցնում իր ծրագրերում, որոնց շրջանակներում կընդլայնվեն ձեռնարկատերերի աջակցության հնարավորությունները:

Համընդհանուր արդյունաբերական մասուն կատարված փոփոխությունները ազդել են վարկի ու վարձակալության տոկոսների համաֆինանսավորման վրա, եւ դրանք աճել են երկու տոկոսային կետով: Նշված փոփոխություններն ուժի մեջ կմտնեն սեպտեմբերի 1-ից:

Համաֆինանսավորումից բացի, շահառուները կարող են օգտվել նոր դրամաշնորհային բաղադրիչներից՝ բարձրալեռնային, ագրոտուրիզմ, կանաչ, թվայնացման, հետազոտությունների եւ զարգացման (R&D) ուղղություններ: Բացի այդ, կին ձեռնարկատերերի համար դրամաշնորհի չափը մեծանում է թվարկված բոլոր բաղադրիչներում: Փոփոխություններ են կատարվել նաեւ միկրոձեռնարկատիրության աջակցության պետական ծրագրում, որն ավելացնում է նոր տնտեսական գործունեություն, այդ թվում՝ սննդի արտադրություն, մասնագիտացված շինարարական աշխատանքների մի քանի կատեգորիաներ եւ այլ միամյա մշակաբույսերի մշակում:

Advertisement for 'ՊԱՐՊԱՆԻՐ ԲՆԱԿԱՐԱՆՆ ՈՒ ԱՄԱՌԱՆՈՅԸ' (Real Estate) featuring a house icon and contact information: 135 ԼԱՐԻՈՎ, 300 ԼԱՐԻ, ԹԵԺ ԳԻԾ: 0125, ՊԱՐՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՍՏԻՎԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ